**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման, պատճենահանող սարքերի, տպիչների պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-23/02» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի մայիսի 15-ին կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-23/02-1» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2024 թվականի հուլիսի 12-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունները պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխությունների առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, Պայմանագրով նախատեսված համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների մատուցման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ (2-րդ չափաբաժնի մասով՝ 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով), ինչպես նաև առաջացել է Պայմանագրի 2-րդ չափաբաժնի մասով նախատեսված համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ծավալների ավելացման, Պայմանագրի 2-րդ չափաբաժնով նախատեսված համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների այլ բնութագիր ունեցող ծառայություններով փոխարինման անհրաժեշտություն (350 000 (երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով):

Փոփոխությունների նկարագրություն՝

- Պայմանագրի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 1-ում «պայմանագրի առավելագույն գինը» սյունակում 2-րդ չափաբաժնի մասով՝ «3 500 000» թիվը փոխարինվել է «3 600 000» թվով,
- հաստատվել է համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ը,
- 31.05.2024թ. կողմերի միջև կնքված N 3 համաձայնագրով հաստատված «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 1-ը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխությունների հիմնավորում՝

Պայմանագրի 7.5 և 7.13 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4**

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ 15.05.2023Թ. N «ԴԴ-ԳՀԾՁԲ-23/02-1» ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, 31.05.2024Թ. N 3 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «12» «07» 2024թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ա. Վարդապետյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բևեռային ուղի» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Պողոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետով նախատեսված պայմանները և հիմք ընդունելով 15.05.2023թ. կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-23/02-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով

- Պայմանագրով նախատեսված համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների 2-րդ չափաբաժնի մասով Պայմանագրով սահմանված առավելագույն գնից՝ 3 500 000 (երեք միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամից, ծառայությունների մատուցման համար նախատեսված 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցների առկայությունը և ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը,
- Պայմանագրի 2-րդ չափաբաժնի մասով նախատեսված համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ծավալների ավելացման անհրաժեշտությունը, Պայմանագրի 2-րդ չափաբաժնով նախատեսված համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների փոխարինման անհրաժեշտությունը այլ բնութագիր ունեցող ծառայություններով և 350 000 (երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցների առկայությունը,

1.1. Պայմանագրի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 1-ում «պայմանագրի առավելագույն գինը» սյունակում 2-րդ չափաբաժնի մասով՝ «3 500 000» թիվը փոխարինել «3 600 000» թվով,

1.2. Հաստատել համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ը՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի,

1.3. 31.05.2024թ. Կողմերի միջև կնքված N 3 համաձայնագրով հաստատված «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 1-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 2-ի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրի պայմանները կիրառվում են 03.01.2024թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, Պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա Համաձայնագիրը կնքելը Կատարողի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.3. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Համաձայնագիրը կազմված է 7 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի հավելված N 1-ը և հավելված N 2-ը հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ***Դատական դեպարտամենտ*** | ***«Բնեռային ուղի» ՍՊԸ*** |
| Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1 | Հասցե՝ ք. Երևան, Բագրատունյաց փ. 49 շ. 30 բն. |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 02228306 |
| Հ/Հ՝ 900011192151 | Հ/Հ՝ 1510032345990100 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ |
| Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ա. Վարդապետյան | Տնօրեն՝ Ա. Պողոսյան |
| ---------------------------------------- /ստորագրություն/ Կ.Տ. | ---------------------------------------- /ստորագրություն/ Կ.Տ. |

**Հավելված N 1**
**«12» «07» 2024թ. կնքված N 4 համաձայնագրի**

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հ/հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | մատուցման միավոր առավելագույն գինը | մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը | ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինը | չափման միավորը | պայմանագրի առավելագույն գինը | քանակը | մատուցման | |
| | | | | | | | | | | հասցեն | Ժամկետը |
| 1 | 50311120/13 | Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ | Համաձայն՝ կից ցանկ 1-ի | | **586 500** | 404 685 | դրամ | 250 000 | 1 | **ք. Երևան՝** Կորյունի 15/1, 17, Բաշինջաղյան 100, Վազգեն Սարգսյան 5, Թբիլիսյան խճուղի 3/9, Մովսես Խորենացու 162ա, Տիգրան Մեծի պողոտա 23/1, Նազարբեկյան թաղամաս 40, Հալաբյան 41ա, Գյուլիքեխվյան 20, Հրաչյա Ներսիսյան 10, Արշակունյաց պողոտա 24/1, Օտյան 53/2, | Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը: |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | Գարեգին Նժդեհի 23 | |

*1. Սարքերի այն մասերը, որոնք ենթակա չեն վերանորոգման, պետք է փոխարինել նորով, որոնք պետք է լինեն չօգտագործված և որոնց համար պետք է տրվի առնվազն 6 (վեց) ամիս երաշխիքային ժամկետ:*

*2. Ծառայությունները պետք է մատուցվեն Պատվիրատուից էլեկտրոնային փոստի միջոցով կամ բանավոր հայտ ստանալու օրվանից հետո, հայտով նշված հասցեում 5 (հինգ) օրացուցային օրվա ընթացքում՝ առանց մասերի փոխարինման ծառայությունների դեպքում և 7 (յոթ) օրացուցային օրվա ընթացքում՝ մասերի փոխարինումով ծառայությունների դեպքում: Առանձին դեպքերում, երբ փոխարինվող մասերը փվյալ պահին առկա չեն՝ Պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել ծառայությունների մատուցման այլ ժամկետ:*

*Այն դեպքում, երբ Պատվիրատուի նշած հասցեում հնարավոր չէ պատշաճ կերպով իրականացնել սպասարկումը, Պատվիրատուի համաձայնությամբ վերանորոգման ենթակա սարքը կարող է տեղափոխվել Կատարողի արհեստանոց:*

*Պատվիրատուից <u>առաջին</u> հայտը ստանալուց հետո հայտով նախատեսված ծառայությունները մատուցվում են 20 (քսան) օրացուցային օրվա ընթացքում: Մնացած բոլոր դեպքերում գործում է սույն կետով սահմանված պահանջը:*

*Կատարողը կարող է ծառայությունները մատուցել սույն կետով սահմանված ժամկետներից ավելի կարճ ժամկետներում:*

*3. Յուրաքանչյուր սարքի սպասարկման և նորոգման համար՝ Պատվիրատուի պահանջով Կատարողի կողմից կազմվում, կնքվում և Պատվիրատուին է ներկայացվում նախնական զննման և գնահատման ակտ:*

*4. Ծառայության մատուցման գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ա. Վարդապետյան

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
***«Բևեռային ուղի» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Բագրատունյաց փ. 49 շ. 30 բն.

ՀՎՀՀ՝ 02228306
Հ/Հ՝ 1510032345990100
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ

Տնօրեն՝ Ա. Պողոսյան

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

## ՑԱՆԿ 1

| Հ/Հ | Համակարգիչների, մոնիտորների և անխափան սնուցման սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների տեխնիկական բնութագրերը | Ծառայության մատուցման միավոր առավելագույն գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| | **HPdx7400/dx6120MT/dx2200/de5700/Compaq dc5800/ համակարգիչների** | |
| 1 | Պրոֆիլակտիկա, դիագնոստիկա (փոշիների մաքրում, պրոցեսորի, իրանի, վիդեոքարտի հովացուցիչների մաքրում և յուղում, տերմոքսուկի փոխարինում, սարքավորումների ամբողջական ստուգում) | 3000 |
| 2 | Օպերացիոն համակարգի և ծրագրերի ստանդարտ փաթեթի տեղադրում և կարգավորում (Windows XP,7,8,8.1,10) | 5000 |
| 3 | CPU-ի հովացուցիչի փոխարինում ներառյալ հովացուցիչը LGA 478/775/1050/1150/1155/B75/1155 | 4500 |
| 4 | Մայրական տպասալի նորոգում ներառյալ պահեստամասերը | 6000 |
| 5 | Մայրական տպասալի փոխարինում ներառյալ LGA 478/775/945/G31/G41/H61/H81/H110/ 1150/1155/B75/1156 տպասալը | 30000 |
| 6 | CPU փոխարինում ներառյալ Պենտիում 4 478 2GHz, 3.0GHz, LGA 775 3.0GHz, 3.2GHz. Core 2 Duo E7300, Core 2 Duo E7400,Core 2 Duo E7500, Core 2 Duo E8300, Core 2 Duo E8500, Core 2 Quad Q9500 | 15000 |
| 7 | CPU փոխարինում ներառյալ ինտել Core i3/i5/i7 համապատասխան պրոցեսորով | 30000 |
| 8 | Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ2 1024Մ 667/800ՀՑ (DDR2 1GB 667/800MHZ) | 5000 |
| 9 | Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ2 2048Մ 667/800ՀՑ (DDR2 2GB 667/800MHZ) | 8500 |
| 10 | Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ3 2048Մ 1066/1333ՀՑ (DDR3 2GB 1066/1333MHZ) | 9000 |
| 11 | Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ3 4096Մ 1066/1333ՀՑ (DDR3 4GB 1066/1333MHZ) | 12000 |
| 12 | Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ3 8192Մ 1066/1333ՀՑ(DDR3 8GB 1066/1333MHZ) | 19000 |
| 13 | Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ4 4096Մ 2400ՀՑ(DDR4 4GB 2400MHZ) | 16000 |
| 14 | Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ4 8192Մ 2400ՀՑ(DDR4 8GB 2400MHZ) | 21000 |
| 15 | SVGA փոխարինում ներառյալ Ատի Ռեդեոն/Նվիդիա ԴԴՌ3 2Գբ ՊիՍիԱյ-Էքսպ (nvidia, Ati Redeon/Nvidia DDR3 2Gb PCI Exp 128bit) | 30000 |
| 16 | HDD փոխարինում ներառյալ HDD 1ՏԲ, 7200ռպմ, SATA3 | 26000 |
| 17 | HDD փոխարինում ներառյալ HDD 2ՏԲ, 7200ռպմ, SATA3 | 35000 |
| 18 | CD-RW/DVD-RW-ի փոխարինում ներառյալ ԴՎԴ-ՌՎ(CD-RW/DVD-RW) | 7500 |
| 19 | Սնուցման բլոկի նորոգում (վնասված կոնդենսատորների, միկրոսխեմաների, հովացուցիչի և այլ պահեստամասերի փոխարինում նորով) | 4000 |
| 20 | Սնուցման բլոկի փոխարինում (Cooler 120mm, 450W) ներառյալ սնուցման բլոկը | 7500 |
| 21 | Սնուցման բլոկի փոխարինում (Cooler 120mm 550W) ներառյալ սնուցման բլոկը | 9000 |
| 22 | Սնուցման բլոկի փոխարինում (Cooler 120mm 650W) ներառյալ սնուցման բլոկը | 12500 |
| 23 | Ցանցային քարտի տեղադրում PCI կամ PCI-e 10/100/1000 Mbps  ներառյալ ցանցային քարտը, Lan Card PCI կամ PCI-e | 7000 |
| | **HP ML 330G7/ML 330G6/Supermikro SYS-5038A/DELL Optil Plex TM745 Mini/ սերվերների** | |

| | | |
|---|---|---|
| 1 | Պրոֆիլակտիկա, դիագնոստիկա (փոշիների մաքրում, պրոցեսորի, իրանի, վիդեոքարտի հովացուցիչների մաքրում և յուղում, տերմոքսուկի փոխարինում, սարքավորումների ամբողջական ստուգում) | 4000 |
| 2 | CPU-ի հովացուցիչի փոխարինում ներառյալ հովացուցիչը | 4500 |
| 3 | Մայրական տպասալի նորոգում ներառյալ պահեստամասերը | 7000 |
| 4 | Մայրական տպասալի փոխարինում ներառյալ տպասալը | 60000 |
| 5 | Ինֆորմացիայի վերականգնում | 15000 |
| 6 | RAID-ի վերականգնում | 10000 |
| 7 | Սնուցման բլոկի նորոգում (վնասված կոնդենսատորների, միկրոսխեմաների, հովացուցիչի և այլ պահեստամասերի փոխարինում նորով) | 9500 |
| 8 | Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ սնուցման բլոկը | 25000 |
| | **Մոնիտորի** | |
| 1 | Մոնիտորի նորոգում ներառյալ պահեստամասերը 17" (մատրիցա, լամպ, ինվերտոր, սնուցման բլոկ, մայրական տպասալ կամ անհրաժեշտ այլ պահեստամաս) | 10000 |
| 2 | Մոնիտորի նորոգում ներառյալ պահեստամասերը 19"-20" (մատրիցա, լամպ, ինվերտոր, սնուցման բլոկ, մայրական տպասալ կամ անհրաժեշտ այլ պահեստամաս) | 16000 |
| 3 | Մոնիտորի նորոգում ներառյալ պահեստամասերը 20"-23" (մատրիցա, լամպ, ինվերտոր, սնուցման բլոկ, մայրական տպասալ կամ անհրաժեշտ այլ պահեստամաս) | 23000 |
| | **Անխափան սնուցման սարք** | |
| 1 | Վերանորոգում (ներառյալ վնասված պահեստամասերը, տպասալ, տրանզիստոր, միկրոսխեմա, տրանսֆորմատոր և այլ պահեստամասեր) | 9000 |
| 2 | Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ/4,5Ա | 8000 |
| 3 | Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ/7Ա | 10000 |
| 4 | Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ/9Ա | 13000 |
| 5 | Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ/12Ա | 15500 |
| 6 | Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ/18Ա | 24500 |
| | ***Ծառայությունների մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումար*** | **586500** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
*Դատական դեպարտամենտ*
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ա. Վարդապետյան

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
*«Բնեռային ուղի» ՍՊԸ*
Հասցե՝ ք. Երևան, Բագրատունյաց փ. 49 շ. 30 բն.

ՀՎՀՀ՝ 02228306
Հ/Հ՝ 1510032345990100
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ

Տնօրեն՝ Ա. Պողոսյան

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

**Հավելված N 2**
**« 12 » « 07 » 2024թ. կնքված N 4 համաձայնագրի**

*(Հավելված N 1*
*«31» «05» 2024թ. կնքված N 3 համաձայնագրի)*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| h/h | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50311120/13 | Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ | - | - | - | - | - | - | 250 000 | 250 000 | 250 000 | 250 000 | 250 000 | 250 000 | **250 000** |
| 2 | 50311120/3 | Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ | - | - | - | - | - | 450 000 | 1 100 000 | 1 100 000 | 1 100 000 | 1 400 000 | 1 400 000 | 1 400 000 | **1 400 000** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ա. Վարդապետյան

/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
***«Բևեռային ուղի» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Բագրատունյաց փ. 49 շ. 30 բն.

ՀՎՀՀ՝ 02228306
Հ/Հ՝ 1510032345990100
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ

Տնօրեն՝ Ա. Պողոսյան

/ստորագրություն/
Կ.Տ.